ՆԱԽԱԳԻԾ 41

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2002 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 21-Ի N1809-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

<<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարության աշխատակազմի տեղեկատվայնացման և կապի վարչությունները միաձուլման ձևով վերակազմակերպել ստեղծելով կապի և տեղեկատվայնացման վարչություն:

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 21-ի <<Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարության աշխատակազմ>> պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու և Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարության կանոնադրությունն ու աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին>> N1809-Ն որոշմամբ հաստատված N2 հավելվածի Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարության աշխատակազմի կառուցվածքի 1-ին կետի <<Կառուցվածքային ստորաբաժանումներ>> բաժնի՝

1) <<Տեղեկատվայնացման վարչություն>> տողը հանել

2) <<Կապի վարչություն>> տողը շարադրել հետևյալ խմբագրությամբ <<Կապի և տեղեկատվայնացման վարչություն>>:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Մ. Վարդանյան